

ԵՄԵՆԻ ՄԻԱԿՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 1980-1990թթ.

Եմենի երկու պետությունների* հարաբերություններն ընթացել են թե տարանջատման ու բախումների, թե հաշտության ու միասնության ուղիով, իսկ եմենի միավորման գաղափարը եղել է ներքին և արտաքին քաղաքականության գործոն: Եթե 1960-1970-ականներին եմենի միասնությանն ուղղված գործընթացները բնութագրվել են անկայունությամբ և ուղեկցվել զինված բախումներով, ապա 1980-ականներին աչքի են ընկել զարգացման դրական միտումներով: Եմենի միավորման ուղղությամբ լուրջ քայլեր են իրականացվել, ձևավորվել են միասնության ընդհանուր քաղաքական ինստիտուտներ¹:

1978թ. Յուսիսային Եմենում Ալի Աբդալլա Սալիհի և 1980թ. Յարավային Եմենում Ալի Նասեր Մուհամմադի իշխանության գալուց հետո երկու եմենների հարաբերություններն աստիճանաբար կայունացան ընթանալով գազաթնաժողովների, համատեղ նախարարական համձնախմբերի և Բարձրագույն խորհրդի քարտուղարության շրջանակներում տեղի ունեցող երկկողմ կանոնավոր հանդիպումներով:

Յողվածում ուսումնասիրության առարկա են դարձել, մասնավորապես, եմենի երկու հատվածների նախագահների հանդիպումներն ու այն կարևորագույն պայմանագրերը, որոնք խթանել են երկու պետությունների միավորմանը:

1980թ. հունվարին Սանայում տեղի ունեցած գազաթնաժողովում երկու եմենների նախագահները հանդիպեցին առաջին անգամ: Ալի Աբդալլա Սալիհը իր հայտարարության մեջ, հիմնավորելով եմենի միավորման անհրաժեշտությունը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հարցում, նշեց, որ իրենք համաձայնության են եկել ստեղծելու համատեղ համձնախմբեր, որոնք կմշակեն համատեղ ծրագրեր՝ ընդարձակելով համագործակցությունը տնտեսության, տեղեկատվության, կրթության և մշակույթի ոլորտներում²:

Մայիսի 3-ին նախագահ Ալի Աբդալլա Սալիհը փոխադարձ այցելությամբ մեկնեց Ադեն, որտեղ մայիսի 6-ին պայմանագիր կնքվեց եմենի երկու

*Եմենի Արաբական Չամրապետությունը (կամ Յուսիսային Եմենը) հռչակվել է 1962թ. սեպտեմբերի 26-ին, հակամիապետական հեղափոխությունից հետո: Եմենի ժողովրդադեմոկրատական Չամրապետությունը (կամ Յարավային Եմենը) անկախություն է ձեռք բերել 1967թ. նոյեմբերի 30-ին, երբ անգլիական զորքերը հեռացան երկրից:

կողմերի հարաբերությունների ամրապնդման և բազմակող համագործակցության վերաբերյալ³:

Հունիսի 9-13-ը Սանալում երկու մախազահների համդիպման ընթացքում քննարկվեցին 1970-ականներին կնքված միասնության պայմանագրերի կիրակման, ինչպես նաև տնտեսության բնագավառում մասնագիտական հանձնախմբերի աշխատանքների արդյունքերի և դրանց իրականացման գործնական քայլերի հետ կապված հարցեր: Հանդիպման վերջում կնքվեց պայմանագիր, որ ներառում էր հետևյալ յոթ կետերը՝ 1. Համագործակցել բոլոր հնարավոր միջոցներով՝ Եմենի երկու հատվածներում ամրապնդելու անվտանգությունն ու կայունությունը: 2. Ցանկության դեպքում քաղաքացիները կարող են վերադառնալ հայրենիքի ցանկացած հատված 3. Չաջակցել քաղաքական, ռազմական, տեղեկատվական որևէ գործունեության, որ կարող է հակասել Հյուսիսային Եմենի սեպտեմբերի 26-ի և Հարավային Եմենի հոկտեմբերի 1-ի հեղափոխություններին, ազգային ինքնիշխանությանը, ժողովրդավարությանը և առաջընթացին: 4. Երկու հատվածների սահմանային շրջաններում լուծարել ռազմական հենակետերը և դրանք փոխարինել սովորական ոստիկանական կամ խորհրդանշական ռազմական ուժերով՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ: 5. Հանձնարարել Հարավային Եմենի պաշտպանության մախարարին և Հյուսիսային Եմենի շտաբի պետին՝ սահմանելու եմենական ուժերի կենտրոնացման վայրերը: 6. Քայլեր ձեռնարկել Եմենի տարածքի և ազգային ինքնիշխանության պաշտպանության ուղղությամբ: 7. Համաձայնագրերի և քաղաքական, ռազմական ու մշակութային որոշումների ընդունմանը և դրանցից բխող քայլերի իրականացմանը հետևելու նպատակով կազմակերպել երկու Եմենների մախազահների համդիպումը չորս ամիսը մեկ:

Ադենի և Սանայի պայմանագրերով ամրագրված առանձին դրույթներ կարևոր նշանակություն ունեին և հնարավորություն ընձեռեցին հաղթահարել միասնությունը պատենշող շատ իրողություններ: Այդ առումով հիշարժան են ներքին գործերի մախարությունների միջև կնքված՝ քաղաքացիների ազատ տեղաշարժման մասին պայմանագիրը:

1981թ. նոյեմբերի 30-ին Հյուսիսային Եմենի մախազահ Ալի Աբդալլա Սալիհի՝ Ադեն կատարած այցելության ընթացքում դեկտեմբերի 3-ին կնքվեց պայմանագիր, որը կարևորվում է Եմենի Բարձրագույն խորհրդի աշխատանքները աշխուժացնելու առումով: Խորհուրդը, որ ղեկավարում էին երկու երկրների մախազահները, պետք է զումարվեր վեց ամիսը մեկ կամ, անհրաժեշտության դեպքում, արտահեթ, հաջորդաբար երկու մայրաքաղաքներից մեկում: Բացի այդ համաձայնություն ձեռք բերվեց ձևավորելու խորհրդի քարտու-

ղարություն, որի գրասենյակները պետք է գործեին թե՛ Ադեմում, թե՛ Սանայում: Խորհուրդը պետք է հետևեր միասնության պայմանագրերի իրականացմանը, պայմանավորվածություն ձեռք բերելու ձեռնարկվելիք միջոցառումների համար, հսկել մասնագիտացված հանձնախմբերի գործունեությունը՝ ի հայտ բերելով կողմերին հետաքրքրող ներքին և արտաքին խնդիրները:

1981թ. դեկտեմբերի 3-ի պայմանագիրն ընդգրկեց նաև հատուկ կետեր համակարգործակցության ամենատարբեր ոլորտների (տնտեսական, արդյունաբերական, գյուղատնտեսական, երկրագիտական, ճանապարհաշինարական, առողջապահական, կրթական, տեղեկատվական) համակարգման և ուսումնասիրության վերաբերյալ, ներառյալ՝ փորձի փոխանակումը⁴:

1982թ. մայիսի 2-ին Թաիզում գումարված գազաթնաժողովը լուրջ քայլ կատարեց վերացնելու երկկողմ հարաբերությունների բարելավմանը խոչընդոտող հանգամանքները: Ասվածի ապացույցն է այն փաստը, որ համաձայնություն ձեռք բերվեց չմիջամտել միմյանց ներքին գործերին, բացառել ուժի կիրառումը, մասնավորապես սահմաններում, հիմնահարցերը լուծել խաղաղ ճանապարհով⁵: Պայմանավորվածություն ձեռք բերվեց, որպեսզի Հարավի ղեկավարությունը միջնորդի և երաշխավորի Հյուսիսի ընդդիմադիր հայրենասիրական հայրենական ճակատի և Սանայի միջև կնքվելիք համաձայնագիրը⁶:

Գազաթնաժողովի ավարտին երկու նախագահները հավաստեցին գործնական քայլերի միասնության և միայն կնքված պայմանագրերի չղանակներում գործելու իրենց պատրաստակամությունը: Նրանք հայտարարեցին, որ համաձայն են հաղթահարել անկայունությունը և Եմենի երկու հատվածների միասնությանը խանգարող արգելքները⁷:

Հարավային Եմենում սոցիալիստական կուսակցության երկու թևերի միջև իշխանության համար սկսված արյունալի հակամարտության ավարտից հետո (որ հայտնի է 1986թ. հունվարի 13-ի դեպքեր անունով) իշխանության եկավ հաղթող թևը՝ կուսակցության գլխավոր քարտուղար Ալի Սալիմ Ալբիդի գլխավորությամբ: Եմենի միավորման հարցում Ալբիդը շարունակեց հետամուտ լինել նախորդ իշխանությունների որդեգրած ուղուն և Հյուսիս հետ համագործակցությանը:

Հյուսիսային Եմենի նախագահ Ալի Աբդալլա Սալիհի և սոցիալիստական կուսակցության գլխավոր քարտուղար Ալի Սալիմ Ալբիդի մասնակցությամբ 1988թ. մայիսի 3-4-ը Սանայում անցկացվեց գազաթնաժողով: Հանդիպման ընթացքում նավթային պաշարների միասնական շահագործման վերաբերյալ կնքված պայմանագրի շնորհիվ հաջողվեց հարթել այն լարվածությունը,

որ ի հայտ էր եկել հատկապես սահմանային Սարիբում և Շուբուխում նավթի հայտնաբերման հետևանքով: Որոշվեց ստեղծել եմենական ընկերություն, որ զբաղվելու էր երկու հատվածների նավթային և մետաղյա պաշարների շահագործմամբ: Նախագահները ստորագրեցին մեկ պայմանագիր՝ դյուրացնելու երկու կողմերի քաղաքացիների տեղաշարժը անձնագրերով և մշտական սահմանակետերի լուծարման ու դրանք միասնական սահմանակետերով փոխարինելու մասին⁸:

Այս կապակցությամբ կցանկանայինք նշել, որ 1984թ. Յուսիսային Եմենում և 1987թ. Չարավային Եմենում, հատկապես սահմանային շրջաններում, հայտնաբերված նավթը հնարավոր է՝ դառնար երկու կողմերի պառակտման գործոն՝ հանգեցնելով պատերազմի և կողմերից յուրաքանչյուրի իրավունքների և մենաշնորհների կորստի: Նավթի հայտնաբերմամբ որոշակի լարվածություն էր առաջացել, մինչև որ երկու հատվածների քաղաքական ղեկավարները իմաստնություն և վճռականություն համղես բերեցին հաղթահարելու նոր ձևավորվող հակամարտությունը և նավթը տարանաջատման գործոնից վերածելու միավորման գործոնի: Սա մայում կնքված պայմանագրի միջոցով կողմերը հավանություն տվեցին սահմանային շրջաններում հայտնաբերված նավթից համատեղ օգտվելու հնարավորությանը՝ բարելավելու երկու հատվածների ժողովրդի կենսամակարդակը՝ ցանկություն ունենալով դուրս բերել երկու երկրների տնտեսությունները ճգնաժամից:

1989թ. նոյեմբերի 29-ին նախագահ Սալիհը երեք տարվա ընդմիջումից հետո այցելեց Ադեն, որտեղ կողմերը ներկայացրեցին միավորման սեփական նախագծերը: Սա մեկ առաջարկում էր ստեղծել ռազմական միասնական հաստատություններ, իրականացնել միասնական արտաքին քաղաքականություն՝ պահպանելով յուրաքանչյուր հատվածի կառավարությունը: Ադենն առաջարկում էր երկու հատվածներից ստեղծել ժողովրդական բարձրագույն խորհուրդ և բարձրագույն կառավարություն՝ պահպանելով կառավարական հաստատություններն իրենց տեսքով:

Նոյեմբերի 29-ի բանակցություններում նախագահները շոշափելի արդյունքի չհասան: Սակայն հաջորդ օրը փակ դռների հետևում նրանք ստորագրեցին միասնական պետության սահմանադրության նախագիծը:

Չարկ է նշել, որ նոր սահմանադրությունը դառնալու էր Եմենի միավորման անկյունքարը և որևէ խոցելի տեղ չպետք է ունենար: Սակայն միավորման գործընթացի ընթացքում Եմենի երկու հատվածների իշխանությունները հայտնաբերեցին, որ նոր սահմանադրության նախագիծը փոփոխությունների և լրացումների կարիք ունի: Երկկողմ հանդիպման անհրա-

Ժեշտությունը հրատապ դարձավ⁹: 1990թ. ապրիլի 19-22-ը Սանայում կողմերի ավելի քան յոթանասուն պաշտոնատարների հանդիպման ընթացքում ստորագրվեց համաձայնագիր, որով հռչակվեց Եմենի Հանրապետությունը և հաստատվեց անցումային շրջանը: Ուշադրության է արժանի այն փաստը, որ կողմերի պատվիրակության մեջ զինվորականները կազմում էին մասնակիցների 1/3-ը, որն ապացուցում է նրանց դերի կարևորումը Եմենի միավորման գործընթացում:

Համաձայնագրի կետերը հետևյալն էին՝ 1.Եմենի երկու հատվածների միջև ստեղծել ընդհանրական միասնություն, միջազգային ատյաններում հանդես գալ մեկ միասնական պետության՝ Եմենի Հանրապետության, դրոշի ներքո: 2.Անցումային շրջանում կազմել Նախագահական Խորհուրդ հինգ հոգուց, որոնք իրենց առաջին հանդիպման ժամանակ պիտի ընտրեն Խորհրդի նախագահին և նրա տեղակալին: Այսպիսով, երկու հատվածների ժողովրդական և Շուրայի խորհուրդների ընտրությամբ կծնավորվի Նախագահական Խորհուրդը Եմենի սահմանադրությամբ երդման արարողության միջոցով: 3.Համաձայնագրի ստորագրումից սկսած երկու տարի վեց ամիսը սահմանվում է անցումային շրջան, որի ընթացքում ձևավորվելու է Պատգամավորների Խորհուրդ ժողովրդական և Շուրայի խորհուրդների բոլոր անդամների մասնակցությամբ, ներառյալ երեսուն մեկ անդամները, որոնց ընտրում է Նախագահական Խորհուրդը: 4.Նախագահական Խորհրդի որոշմամբ ստեղծել Խորհրդակցական խորհուրդ՝ քառասուն հինգ անդամներով: 5.Նախագահական Խորհրդի որոշմամբ ստեղծել Եմենի Հանրապետության կառավարություն, որը լիազորված է կատարելու սահմանադրությամբ կառավարությանը հատկացված պարտականությունները: 6.Եմենի Հանրապետության վարչական բաժանման համար ստեղծել հատուկ հանձնախումբ՝ նպատակ ունենալով ամրապնդել միասնությունը և վերացնել մասնատվածության հետևանքները: 7.Նախագահական Խորհրդի հրապարակած որոշումներն օրենքի ուժ են, օրինակ՝ պետության հիմնի, դրոշի կամ լոզունգի մասին որոշումը: Նախագահական Խորհուրդը պետք է որոշի սահմանադրությունը հանրաքվեի ներկայացնելու հարցը մինչև 1990թ. նոյեմբերի 30-ը: 8.Հիշյալ համաձայնագիրը, ինչպես նաև սահմանադրության նախագիծը օրենքի ուժ են ստանում խորհրդարանի երկու՝ ժողովրդական և Շուրայի խորհուրդներում հաստատվելուց հետո¹⁰:

⁹ Այս թիվը հաստատվել է լրացնելու Հարավի ժողովրդական Խորհրդի անդամների թիվը, որպեսզի հավասարեցվի Հյուսիսի Շուրայի Խորհրդի անդամների թվին: Նպատակը երկու կողմերի ներկայացուցիչների քանակի հավասարակշռության պահպանումն է:

Եմենի միասնության համար կային արտաքին և ներքին վտանգներ, որոնք փորձում էին խոչընդոտել միավորվելուն: Այս հանգամանքները նպաստեցին, որպեսզի կողմերը պայմանավորվածություն ձեռք բերեն միավորման նախօրոք հաստատված ժամկետը 1990թ. նոյեմբերի 30-ից մայիսի 22-ը տեղափոխելու մասին¹¹:

1990թ. մայիսի 21-ին Սանայում գումարվեց Շուրայի խորհուրդը, որը հաստատեց սահմանադրությունը և անցումային շրջանի ժամկետը: Չայների 78% մեծամասնությամբ հռչակվեց Եմենի Հանրապետությունը¹²: (Ուսումնասիրելով Շուրայի խորհրդում քաղաքական հոսանքների ուղղվածությունը՝ համոզվում ենք, որ դեմ քվեարկողների մեծ մասը կարող էին լինել իսլամական թևի ներկայացուցիչները, որոնք մերժում էին Հարավի կոմունիստական անհավատ համակարգի հետ միավորմանը): Մինչ այդ Ադենում ժողովրդական Բարձրագույն խորհուրդը միաձայն հաստատել էր միասնության մասին որոշումները: Արդյունքում 1990թ. մայիսի 22-ին հռչակվեց Եմենի Հանրապետությունը: Ադենում գումարվեցին ժողովրդական և Շուրայի խորհուրդները, որտեղ հայտարարվեց միասնական Եմենի Հանրապետության ստեղծման մասին: Իջեցվեցին երկու երկրների դրոշմները, բարձրացվեց միասնական Եմենի դրոշը¹³:

Հարկ է նշել, որ Եմենի միավորումը պայմանավորված էր արտաքին և ներքին գործոններով: 1980-ականների վերջերին ընթացող տարածարշրջանային և միջազգային փոփոխություններն ունեցան չափազանց կարևոր դեր Եմենի միավորման համար: Հարավային Եմենի վարչակարգի դիրքերը խաղվեցին 1980-ականների երկրորդ կեսին ԽՍՀՄ-ում և Արևելյան Եվրոպայում կատարվող արագընթաց փոփոխություններն ու ճգնաժամը սոցիալիստական համակարգումը, որը, սկսած 1967-ից, Հարավային Եմենի գաղափարական և միջազգային հենարան էր ռազմական, տնտեսական և քաղաքական բնագավառներում¹⁴: 1986թ. հունվարի 13-ին Հարավում սոցիալիստական ներկուսակցական ճգնաժամից հետո սոցիալիստական ճամբարից եկող օժանդակությունը կրճատվեց: Այս հանգամանքները նպաստեցին կուսակցության նկատմամբ ժողովրդական զանգվածների վստահության կորստին: Հյուսիսային Եմենի նախագահ Սալիհը քաջ գիտակցում էր, որ Հարավում սոցիալիստական ղեկավարությունը ստիպված կլիներ ընդառաջ գնալ Եմենի միավորմանը՝ խուսափելու քաղաքական և տնտեսական հնարավոր խնդիրներից¹⁵:

Այուս կողմից՝ Եմենի միավորմանը խթանեց ԱՄՆ-ը, որ մի շարք նպատակներ էր հետապնդում: Դրանցից ամենակարևորը ամերիկյան նավթային ընկերությունների շահերն էին Եմենի նավթային ձեռնարկություններում: Հարկ է նշել, որ միացյալ Եմենի ստեղծումը՝ ռազմավարական առանձնա-

հատուկ դիրքորոշմամբ, հարավոր է՝ դառնար Արաբական թերակղզու հարավում ամերիկյան շահերի անվտանգության գոտի: Բացի այդ դեմոկրատական եմենը կապահովեր կղզու կայունությունը սաուդական վարչակարգի փլուզման դեպքում, որը շարունակում էր կասկածամտությամբ վերաբերվել դեմոկրատական և քաղաքական զարգացումներին¹⁶:

Ի տարբերություն եմենի երկու հատվածների միջև 1960-70-ականներին առկա հակասական և անկայուն հարաբերությունների, լարվածության և բախումների, 1980-ականներն աչքի ընկան եմենի միավորման գործընթացների նպատակաուղղվածությամբ և գործնական շեշտադրումներով: Երկկողմ հանդիպումները բնութագրվեցին փոխադարձ վստահությամբ և գործնական մոտեցումներով: Անհերքելի է այն փաստը, որ դրանք խթանեցին երկու հատվածների հարաբերությունների կայունացմանը, օժանդակեցին օրենսդիր ու գործադիր մարմինների մերձեցմանը, ամրապնդեցին կողմերի վստահությունը: Իրենց լուծումը գտան մի շարք հրատապ և կենսական խնդիրներ, դադարեցվեցին սահմանային բախումները, որոնք երկկողմ հարաբերությունների կայունության համար վտանգավոր նախադեպ էին, կարգավորվեց երկու հատվածների քաղաքացիների ազատ և անվտանգ տեղաշարժման հարցը, որը 1972-ից դուրս չէր գալիս հանդիպումների օրակարգերից: Բացի այդ կողմերին հաջողվեց համաձայնության գալ կարևորագույն խնդիրներից մեկի՝ սահմանադրության հարցում:

1980-90-ականներին եմենի միավորմանը միտված և հաջողությամբ հանգուցալուծված գործընթացը երկար ուղի անցավ՝ սկզբնավորվելով 1970-ականներից: Միավորման գիտակցությունը երկու հատվածների հասարակություններում վաղուց արդեն հասունացել էր: Այս հարցում ոչ պակաս կարևոր նշանակություն ունեցան եմենի ժողովրդի ջանքերը, ինչպես նաև՝ հաշտության և միասնության հասնելու նրանց բարձր գիտակցությունը:

Գրականություն

1. Խալիդ Իբն Մուհամմադ ալ-Կասիմի, Սառայի պայմանագիրը. եմենի միասնության ուղին, Շարժա, 1990, էջ 108-109 (արաբերեն):
2. Խալիդ Իբն Մուհամմադ ալ-Կասիմի, եմենական միասնությունը ներկայում և ապագայում, Բեյրութ, 1987, էջ 282 (արաբերեն):
3. եմենի Դաճրապետություն: Մեկ եմեն, եմենի միասնության փաստաթղթերի շարք (2), Սանա, 1988, էջ 73 (արաբերեն):
4. Խալիդ Իբն Մուհամմադ ալ-Կասիմի, եմենական միասնությունը. նշվ. աշխ., էջ 273-276 (արաբերեն):

5. Եմենի Գանրապետություն, ԵՂՎ. Ժողովածուն (3), Սանա, 1989, էջ 130 (արաբերեն):
6. Եմենի Գանրապետություն, ԵՂՎ. Ժողովածուն, (4), Սանա, 1990, էջ 139 (արաբերեն):
7. «Ալ-Խալիջ» (օրաթերթ) 08.05.1982 (Արաբական Սիացյալ Էմիրություններ) (արաբերեն):
8. Եմենի Գանրապետություն, ԵՂՎ. Ժողովածուն (3), Սանա, 1990, էջ 228-229 (արաբերեն):
9. Մուհամմադ Ահմադ ալ-Աշմալի, Ժամանակակից Եմենի պետության քաղաքական պատմություն: Սփռվածության և տարածայնության փուլից դեպի միասնություն և բարգաավաճում, 1838-2002թթ., Կահիրե, 2002, էջ 172, (արաբերեն):
10. Եմենի Գանրապետության հռչակման և անցումային շրջանի կազմակերպման պայմանագիր, Սանա, 1990, էջ 45 (արաբերեն):
11. Գամուդ Մունսար, Եմենա-ամերիկյան հարաբերությունները 1990-2000թթ., 2001թ. Սանայում «Եմենը և աշխարհը» կոնֆերանսում ներկայացրած հետազոտություն, Կահիրե, 2002, էջ 221-222 (արաբերեն):
12. Շուրայի Խորիդի զեկույց, Սանա, 22.05.1990, էջ 7(արաբերեն):
13. Մուհամմադ Ահմադ ալ-Աշմալի, ԵՂՎ. աշխ., էջ 174-175:
14. Ռադիյա Իսամալլա, Եմենի պատերազմի փաստաթղթեր-Ադեն 1994.05.05-1994.07.07: Ինչո՞ւ լռեց աշխարհը Եմենի գրավումից հետո, Ադեն, 1996, էջ 30 (արաբերեն):
15. Մուհամմադ Ահմադ ալ-Աշմալի, ԵՂՎ. աշխ., էջ 166-167:
16. Սամիր Մուհամմադ Ահմադ ալ-Աբդալի, Եմենի միասնությունը և արաբական տարածաշրջանային համակարգ, Կահիրե, 1997, էջ 79-81 (արաբերեն):